«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (7 ԴԱՍԱԺԱՄ) ԵՎ ՏՂԱՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (3 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

.Անձը հաստատող փաստաթուղթ,

.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

.Ինքնակենսագրություն (Ձև 5),

.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

.Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում): (17-րդ կետը փոփ., լրաց. 11.10.2023 N 128-Ն):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 26-ից մարտի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՄԱՐՏԻ 14-ին՝ ժամը 12-ին, Լորուտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 84-82-62 հեռախոսահամարով: